Եվրոպական և եվրասիական ինտեգրումների համադրման ՀՀ քաղաքականությունը. զարգացման երկու հնարավորությո՞ն, թե՞ երկու խոչընդոտ

ԱՆԱՀԻՏ ԲԱԲԱՅԱՆ
Բրյուսովի պետական համալսարան

Հետխորհրդային երկրների շարքում Հայաստանն ունի եզակի դիրք միջազգային ինտեգրման տեսակետից: Եվրասիական և եվրաինտեգրման ուղիների համադրումը մշտապես եղել է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնային նպատակը և դրան հասնելու համար Հայաստանը անդամակցել է հետխորհրդային տարածքում առկա միջազգային ինտեգրման կառույցներին՝ Անկախ պետությունների համագործակցություն, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն, Եվրասիական տնտեսական միություն, դրսևորելով ակտիվ և նախաձեռնողական մասնակցություն, միաժամանակ, անդամակցել է Եվրոպայի խորհրդին և ակտիվորեն համագործակցում է ԵՄ-ի հետ՝ կնքելով գործընկերությունն ընդլայնելու առանձնահատուկ համաձայնա-գիր: Այդ երկու ուղիների համադրումը ոչ միայն թույլ է տալիս օգտագործել դրանց ընձեռած հնարավորություններն, այլև ստեղծում է երկուսից բխող սահմանափակումներ: Հետևաբար, խիստ արդիական է ինչպես այդ երկու ուղիների համադրման արդյունա-վետության, այսինքն՝ համադրումը որպես զարգացման երկու հնարավորությո՞ն, թե՞, ընդհանրապես, տարամիտվող ուղղություններով միաժամանակ գործելու հնարավորության՝ որպես երկու խոչընդոտի հետազոտությունը:

Բանալի բառեր

Համադրման քաղաքականություն, Եվրոպական միություն, Ռուսաստանի Դաշնություն, զարգացման երկու հնարավորություն, երկու խոչընդոտ

Նախաբան

Խորհրդային Միության փլուզումից հետո անկախություն ձեռք բերած երկրները բախվել էին մի շարք մարտահրավերների: Պետությունները իրենց առջև ունեին մեկ նպատակ՝ հաղթահարել

ստեղծված մարտահրավերները, ինչպիսիք են՝ քաղաքական շահերի ձևակերպում, քաղաքակրթական արժեքների արդիա-կանացում, աշխարհաքաղաքական և աշխարհամշակութային ինքնորոշում: Հայաստանի Հանրապետությունն էլ անկախությունից հետո գտնվում էր բավականին ծանր վիճակում՝ հայտնվելով քաղաքական, տնտեսական և սոցիալական նոր մարտահրավերների առջև: Այդպիսի մարտահրավերներից էին, հատկապես, պետական ինստիտուտների, արտաքին և ներքին անվտանգության ամրապնդումը, ազատ, մրցակցային շուկայական հարաբերությունների միջոցով կայուն, զարգացող տնտեսական համակարգի ձևավորումը և այլն: Առանձնահատուկ կարևորություն ուներ արտաքին քաղաքականության ձևավորումը և ամրապնդումը: Ընդ որում, այստեղ կարևորվում է ոչ միայն արտաքին քաղաքականության՝ ինտեգրման միջավայրի ընտրությունը, այլև այն, թե ի՞նչ է ցանկանում պետությունը և ի՞նչ ակնկալիքներ է ունի ինտեգրման միջավայրից:

Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներն ունեին բազմակողմ միջազգային հարաբերությունների զարգացման երկու տարբերակ՝ ԱՊՀ կամ եվրոպական ինտեգրում, և նրանց համար հնարավոր է ձևակերպել նպատակի իրականացման հետևյալ ռազմավարական այլընտրանքները.

1. ազգ-պետության ձևավորում,
2. ազգ-պետության ձևավորում և ինտեգրացիա ԱՊՀ շրջանակներում,
3. ազգ-պետության ձևավորում և եվրոպական ինտեգրացիա ժողովրդավարական չափանիշների շրջանակում,
4. ազգ-պետության կառուցում և միաժամանակյա ինտեգրացիա ԱՊՀ և եվրոպական ժողովրդավարական չափանիշների շրջանակներում,
5. ազգ-պետության կառուցում և լիարժեք եվրոպական ինտեգրում (անդամակցություն Եվրամիությանը)[1]:

[1] **Թորոսյան Տ.**, Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, ՀՀ ԳԱԱ Գիտություն, Երևան, 2006:

Հայաստանը սկզբնական շրջանում մեծ հետաքրքրություն ցուցաբերեց ԱՊՀ-ի և դրանից հետո հետխորհրդային տարածքում ձևավորվող ինտեգրման միավորների նկատմամբ: Միևնույն ժամանակ անմասն չմնալով եվրոպական ինտեգրման միջավայրից: Ինչն էլ վկայում էր Հայաստանի համադրման քաղաքականություն մասին:

Համադրման քաղաքականության փորձի ձևավորումը և զարգացումները

Հայաստանը, լինելով հետխորհրդային տարածքում առկա ինտեգրման ձևաչափերի անդամ պետություն, միաժամանակ հարաբերություններ է հաստատում եվրոպական կառույցների հետ: Անդամ է Եվրոպայի խորհրդին, երկկողմ հարաբերություններ էր սկսել Եվրոպական միության հետ՝ անդամակցելով Եվրոպական հարևանության քաղաքականությանը և Արևելյան գործընկերությանը, ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերի: Սա էլ ցույց է տալիս, որ Հայաստանը անկախության ձեռքբերումից հետո սկսել էր կիրառել համադրման քաղաքականություն:

Նախ անդամակցել է հետխորհրդային տարածքում առկա միջազգային ինտեգրացիոն հետևյալ ձևաչափերին՝ Անկախ պետությունների համագործակցություն, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն: Միևնույն ժամանակ անդամակցել Եվրոպայի խորհրդին, Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող նախագծերի՝ TACIS (Technical Assistance to the Commonwealth of Independent States), «TRACECA» (Տրանսպորսային միջանցք՝ Եվրոպա, Կովկաս, Ասիա), «INOGATE»-ին, որը էներգետիկ համագործակցության ծրագիր է, ինչպես նաև Պարենային անվտանգության ծրագիր, Էրազմուս+, Տեմպուս, Թայեքս (TAIEX), Թվիննինգ (TWINNING), Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգը (GSP+) և այլն: Եվ, որ ամենակարևորն է Եվրոպական հարևանության քաղաքականությանը ու դրանից հետո Արևելյան գործընկերությանը, որով էլ ավելի տեսանելի

դարձավ Հայաստան-Եվրամիություն հարաբերությունների զարգացումը:

Այս սկզբնական շրջանը համադրման քաղաքականության փորձի ձևավորման փուլն էր, որը իր երկրորդ՝ բուն փուլին, հասավ 2013թ., երբ ՀՀ-ն հրաժարվեց Ասոցացման համաձայնագրի ստորագրումից և անդամակացեց Մաքսային միությանը: Սա խոչընդոտ չհանդիսացավ եվրաինտեգրման երկու փուլերի հետ երկկողմ հարաբերությունների զարգացմանը, որն էլ նշանավորվեց համադրման քաղաքականության հետագա զարգացումներով:

Մաքսային միությանն անդամակցությունը չխոչընդոտեց ՀՀ-ԵՄ հարաբերությունների շարունակական զարգացումներին: Դեռևս 2011թ. Հայաստանը և ԵՄ-ն ստորագրել էին «Շարժունակության շուրջ գործընկերություն» համաձայնագիրը, որով կողմերը պարտավորություն ստանձնեցին մարդկանց երկկողմ տեղաշարժերի բարելավման ուղղությամբ՝ միաժամանակ իրականացնելով միգրացիոն հոսքերի ավելի լավ կառավարմանն, այդ թվում՝ անկանոն միգրացիայի կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված գործողություններ: Սրան էլ հաջորդել էր 2012թ. դեկտեմբերի 17-ին ստորագրված «ՀՀ և ԵՄ միջև Մուտքի արտոնագրերի տրամադրումը դյուրացնելու մասին» համաձայնագիրը[2], իսկ 2013թ. ապրիլի 19-ին՝ «ՀՀ և ԵՄ միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման մասին» համաձայնագիրը[3], որոնք ուժի մեջ մտել են 2014թ. հունվարի 1-ից, երբ Հայաստանը արդեն Մաքսային միության անդամ էր: Նույն թվականին Եվրոպական միության հետ մեկնարկել էր՝ «Գործընկերություն հանուն լավ կառավարման»

[2]Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիր, https://eeas.europa.eu/sites/eeas/files/eu-armenia_agreement_visa_facilitation_arm.pdf, (09.09.21).

[3]Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագիր, https://eeas.europa.eu/sites/eeas/files/eu-armenia_agreement_readmissiom_arm.pdf, (09.09.21).

ծրագիրը, որընպատակ ուներ Արևելյան գործընկերության երկրներից յուրաքանչյուրին տրամադրել տվյալ երկրի առանձնահատկությունները հաշվի առնող աջակցություն՝ մարդու իրավունքների, օրենքի գերակայության և ժողովրդավարության ոլորտներում, ազգային օրենսդրությունը և գործելակերպը եվրոպական չափանիշներին համապատասխանելու համար[4]: Միևնույն ժամանակ, Հայաստանը 2014թ. հոկտեմբերի 10-ին ստորագրել է Եվրասիական տնտեսական միությանը միանալու պայմանագիր, որը ուժի մեջ է մտել հաջորդ տարի՝ հունվարի 2-ից: ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցության մեկնարկը համընկավ նույն տարում ՀՀ-ԵՄ նոր համաձայնագրի բանակցությունների սկսման հետ:

2015թ. հոկտեմբերի 12-ին ԵՄ-ն սկսեց բանակցությունները Հայաստանի հետ՝ նոր, իրավական ուժ ունեցող, համալիր համաձայնագրի շուրջ, իսկ պաշտոնական բանակցությունների մեկնարկը տրվեց 2015թ. դեկտեմբերի 7-ին: Այս երկու գործընթացների իրականացումը համադրման քաղաքականության լավագույն օրինակ է, երբ միմյանցից էապես տարբերվող կառույցներից մեկին ինտեգրվելը և համագործակցության խորացումը մյուսի հետ տեղի ունեցան գրեթե միաժամանակ՝ առանց որևէ արգելքների:

2015թ. դեկտեմբերի 7-ին Բրյուսելում ստորագրվեց «Փոքր և միջին ձեռնարկությունների մրցունակություն (COSME)» ծրագրին ՀՀ մասնակցության մասին համաձայնագիրը, որն ուժի մեջ մտավ 2016թ. սկզբին: Ծրագիրը խթանում է ձեռնարկատիրությունը և ձեռնարկատիրական մշակույթը, բարելավում է ՓՄՁ-ների համար ֆինանսական միջոցների մատչելիությունը և նպաստում է ՓՄՁ-ների մրցունակության բարձրացմանը[5]: 2015թ. նաև ավարտվեց ԵՄ-ի ամենամեծ գիտահետազոտական և նորարարական ծրագրում՝ «ՀՈՐԻԶՈՆ 2020», Հայաստանի մասնակցության շուրջ

[4]Տարածաշրջանային ծրագրեր, Արևելյան գործընկերության երկրների համար Գործընկերություն հանուն լավ կառավարման, https://www.coe.int/hy/web/yerevan/70, (10.09.21).

[5]COSME, Europe’s programme for small and medium-sized enterprises, https://ec.europa.eu/growth/smes/cosme/, (10.09.21).

բանակցությունները, իսկ 2016թ. մայիսին ստորագրվեց համաձայնագիրը: «ՀՈՐԻԶՈՆ 2020»-ի միջոցով տրամադրվում է ֆինանսավորում գիտահետազոտական և նորարարության ոլորտին և աջակցություն փոքր և միջին ձեռնարկություններին[6]:

2015թ. մարտին նաև Եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակվեց Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) վերանայման մասին առաջարկը՝ գործընկեր երկրների հետ համագործակցությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով[7]: Վերանայման արդյունքները պետք է նպաստեն ԵՄ-ի ավելի լայն քաղաքականության, մասնավորապես՝ արտաքին և անվտանգության քաղաքականության գլոբալ ռազմավարության մշակմանը: Հայաստանը ողջունեց նոր քաղաքականության շրջանակներում տարբերակման և «ավելին ավելիի դիմաց» սկզբունքներով առաջնորդվելու գաղափարը:

ԵՀՔ վերանայումից, մասնավորապես՝ տարբերակման սկզբունքի ամրագրումից հետո Եվրոպական միությունը նոր մոտեցումներ ձևավորեց իր գործընկերների հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ: 2016թ. հոկտեմբերին Արտաքին գործողության եվրոպական ծառայության և Եվրոպական հանձնաժողովի համատեղ պատվիրակությունն այցելեց Երևան և հայկական կողմին ներկայացրեց «Գործընկերության առաջնայնություններ» փաստաթղթի նախագիծը: Մի քանի փուլ տևած քննարկումների արդյունքում փաստաթուղթը հաստատվեց 2017թ. նոյեմբերի 20-ին, ապա ստորագրվեց 2018թ. փետրվարի 21-ին: Եվ կարելի է ենթադրել, որ անդամակցությունը ԵԱՏՄ-ին չի սահմանափակում Հայաստան-ԵՄ հարաբերությունները, ինչպես քաղաքական և մշակութային, այնպես էլ տնտեսական՝ ներառելով առևտուր, ներդրումներ և կապիտալի ներհոսք, ինչն էլ վկայում է

[6]Horizon 2020, https://ec.europa.eu/programmes/horizon2020/en/what-horizon-2020, (10.09.21)

[7]Council conclusions on the Review of the European Neighbourhood Policy, https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2015/12/14/conclusions-european-neighbourhood/, (11.09.21).

Հայաստան-ԵՄ արդյունավետ առևտրային գործընկերության մասին[8]:Այս ամենից պարզ է դառնում, որ համադրման քաղաքականությունը բուն փուլից անցում էր կատարել երրորդ՝ զարգացման փուլ, որը իր գագաթնակետին հասավ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (ՀԸԳՀ):

2017թ. փետրվարի 27-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը և ԵՄ Խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը Բրյուսելում հայտարարեցին բանակցային գործընթացի ավարտի մասին, իսկ մարտի 21-ին՝ Երևանում, կողմերը նախաստորագրեցին ՀԸԳՀ-ն: Իսկ նոյեմբերի 24-ին՝ Արևելյան գործընկերության 5-րդ գագաթնաժողովի շրջանակներում, ՀԸԳՀ-ը ստորագրվեց:

Համաձայնագրի ստորագրումից հետո Ֆ. Մոգերինին բարձր է գնահատել այն, նշելով. «Այս համաձայնագիրը հիմնված է ժողովրդավարության, օրենքի գերակայության ու մարդու իրավունքների նկատմամբ ընդհանուր հանձնառության վրա, սա նաև իր տեսակի մեջ առաջին համաձայնագիրն է, որ Եվրամիությունը կնքում է Եվրասիական միության անդամ պետության հետ: Հիմա կարևորը դրա իրագործումն է և կյանքի կոչումը, որպեսզի հնարավորություն ունենանք օգտվել ընձեռած բոլոր առավելություններից: Մենք կշարունակենք համատեղ աշխատել, ինչպես նաև կշարունակենք հետևել՝ ինչպես են այս համաձայնություններն իրագործվում»[9]: Է. Նալբանդյանն հայտարարել էր՝ «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ստորագրումը դարձավ այս գագաթնաժողովի

---

[8]**Hayrapetyan G., Hayrapetyan V.,** Economic Relations between Armenia and the EU within the framework of Eastern Partnership, Eastern Chessboard: Geopolitical Determinants and Challenges in Eastern Europe and the South Causes, № 88, 2015, p. 243.

[9]Remarks by High Representative/Vice-President Federica Mogherini following the signing of the European Union-Armenia Comprehensive and Enhanced Partnership Agreement (CEPA) with Edward Nalbandian, Minister of Foreign Affairs of Armenia, https://eeas.europa.eu/delegations/armenia/36208/remarks-hrvp-federica-mogherini-following-signing-european-union-armenia-comprehensive-and_km, (12.09.21).

հիմնական ձեռքբերումներից մեկը: Այս համընդգրկուն և հավակնոտ համաձայնագիրը մեր համատեղ ձեռքբերումն է, որը նոր գլուխ է բացում Հայաստանի ու Եվրոպական միության հարաբերություններում: Այն կուռ իրավական հիմք է հանդիսանում քաղաքական երկխոսության ամրապնդման, տնտեսական ու ոլորտային համագործակցության ընդլայնման, առևտրի ու ներդրումների համար նոր հնարավորությունների ստեղծման, և շարժունակության մեծացման համար՝ ի շահ մեր քաղաքացիների»[10]:

ՀԸԳՀ-ի ստորագրումը, որը համընկել էր Արևելյան գործընկերության գագաթնաժողովի հետ՝ մասնակիցներին ներկայացվեց նաև «20 արդյունք մինչև 2020թ.» փաստաթուղթը, որը հանդիսանում է գլխավոր նպատակներին ուղղված և շոշափելի արդյունքներ ապահովող գործողությունների փաթեթ[11]: Այդ ընթացքում նաև ՀՀ-ն և Եվրոպական միությունը նախաստորագրեցին Ընդհանուր ավիացիոն տարածքի շուրջ համաձայնագիրը[12]: Այն կապահովի շուկայի ավելի մատչելի պայմաններ երկու կողմերի ավիաընկերություններին և կբարելավի միակցվածությունը՝ ուղևորների համար ստեղծելով ընտրության ավելի լայն հնարավորություններ, ապահովելով ավելի որակյալ ծառայություններ և ավելի ցածր վճարներ: Համաձայնագիրը հանդիսանում է Եվրոպական հանձնաժողովի Եվրոպայի ավիացիոն ռազմավարության մասը, որի միջոցով կստեղծվի ընդհանուր կարգավորող շրջանակ, օրինակ՝ ավիացիայի ապահովության և անվտանգության ապահով-ման ոլորտների վերաբերյալ: Բրյուսելյան գագաթնաժողովի ժամա-նակ ստորագրվել է նաև փոխըմբռնման փաստաթուղթ, որը հաստատեց

[10]Ստորագրվեց Հայաստան-Եվրամիություն Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, https://www.mfa.am/hy/press-releases/2017/11/24/cepa-signing/7718, (13.09.21).

[11]Eastern Partnership (EaP), 20 Deliverables for 2020, https://eeas.europa.eu/sites/eeas/files/swd_2017_300_f1_joint_staff_working_paper_en_v5_p1_940530.pdf, (12.09.21).

[12]Aviation Area Agreement, https://ec.europa.eu/transport/sites/transport/files/aviation-factsheet-armenia.pdf, (12.09.21).

Հայաստանի ավտոմայրուղիների և երկաթգծի համակարգի ինտեգրումը Տրանսեվրոպական տրանսպորտային ցանցին (TEN-T)13:

Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի վավերացումը Հայաստանի կողմից տեղի ունեցավ 2018թ. ապրիլի 11-ին՝ ՀՀ Ազգային ժողովի միաձայն քվեարկությամբ[14]: Իսկ արդեն հունիսի 1-ին, համաձայն ՀԸԳՀ 385-րդ հոդվածի դրույթների, սկսվեց համաձայնագրի ժամանակավոր կիրարկումը: Եվ հենց 2018թ. հունիսի 21-ին արտաքին գործերի նախարար Զ. Մնացականյանի գլխավորած ՀՀ պաշտոնական պատվիրակությունը մասնակցեց ՀՀ-ԵՄ Գործընկերության խորհրդի անդրանիկ նիստին[15]: Կողմերը հատուկ նշել էին, որ սա առաջին հանդիպումն է Համապարփակ և ընդլայնված գործըն-կերության համաձայնագրի ժամանակավոր կիրարկման մեկնար-կից հետո՝ ընդգծելով, որ Գործընկերության խորհուրդը հնարավորություն է ընձեռում ամփոփելու ընդհանուր օրակարգի իրագործման ներկա մակարդակը և նախանշելու համագործակցության հետագա խորացման հեռանկարները: Կողմերը վերահաստատել էին նաև համաձայնագրի նշանակության մասին՝ որպես հարաբերությունների իրավական հիմքի, որը գործնականում ընդգրկում է բոլոր կենսական ոլորտները և համագործակցության շրջանակները:

Այսպիսով, ՀՀ համադրման քաղաքականության փորձը բնորոշվեց երեք փուլերով՝ ձևավորման փուլ, բուն կամ հիմնական փուլ և զարգացման փուլ: Այս փուլերի հաջորդական զարգացումները՝ մինչև 2018թ., մատնանշում են Հայաստանի վարած համադրման քաղաքականության հաջողության մասին: Եվ պարզ է, որ

---

[13]Joint Declaration of the Eastern Partnership Summit, (Brussels, 24 November 2017), 14821/17, p. 8.

[14]ՀՀ Ազգային ժողովը վավերացրեց ՀՀ-ԵՄ նոր շրջանակային համաձայնագիրը, https://www.mfa.am/hy/press-releases/2018/04/11/dfm-nacepa/8126, (13.09.21).

[15]Երկկողմ հարաբերություններ, Եվրոպական Միություն, https://www.mfa.am/hy/bilateral-relations/eu, (13.09.21).

համադրման քաղաքականությունը՝ ձևավորումից մինչև զարգացում, դարձել էր Հայաստանի արտաքին քաղաքականության գլխավոր նպատակակետը:

ԵԱՏՄ անդամակցության պահպանում, ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացում

Հայաստանի արտաքին քաղաքականությունը բնորոշվում է որպես բազմավեկտոր կամ փոխլրացման քաղաքականություն, որն էլ պետության փոխշահավետ հարաբերությունն է իր բոլոր գործընկերների հետ՝ բացառելով նրանցից որևէ մեկի չափազանց արտոնյալ լինելը մյուսների համեմատ[16]: Ներկայում էլ Հայաստանը փորձում է վարել այդպիսի արտաքին քաղաքականություն՝ համադրելով անդամակցության պահպանումը ԵԱՏՄ-ում և զարգացնելով հարաբերությունները ԵՄ-ի հետ:

2013 թվականին Ասոցացման համաձայնագրից հրաժարումը և անդամակցումը Մաքսային միությանը չէր նշանակում ամբողջությամբ փակել դռները Եվրոպական միության հետ համագործակցության համար: Հակառակը, Հայաստանը սկսեց համադրել այդ երկու ուղիները: Այս ճկուն մոտեցումը ենթադրում է համագործակցություն բոլորի հետ՝ համամասնական ձևով[17]: ԵԱՏՄ-ին պաշտոնապես անդամակցությունից հետո Հայաստանը սկսեց Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի շուրջ բանակցությունները: Իսկ մինչ ընթանում էին բանակցությունները՝ Հայաստանից ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանումը կրկնապատկվում էր: Սկսած 2016թ. շարունակաբար բարելավվել

[16]**Molchanov M.,** Regionalism and Multivectorism in Europe's Borderlands: The Strange Case of Ukrain, The *Russian Challenge to the European Security Environment*, 2017, p. 212.
[17]**Vasilyan S.,** Swinging on a Pendulum Armenia in the Eurasian Economic Union and With the European Union, Problems of Post-Communism, № 64, 2017, p. 33.

են ապրանքաշրջանառության ցուցանիշները[18], որը շարունակական բնույթ է կրում: Այսօր Հայաստանի համար առանցքային շուկա է հանդիսանում Ռուսաստանը և ԵԱՏՄ տարածքը, ինչն էապես մեծացնում է Հայաստանի տնտեսական անվտանգությունը: Իսկ արդեն 2017թ. ՀԸԳ համաձայնագրի ստորագրումը վերափոխեց Հայաստան-ԵՄ հարաբերությունների շրջանակը՝ թույլ տալով Հայաստանին վերականգնել եվրոպական ուղղությունը:

Համաձայնագիրը հնարավորություն է ընձեռում ամրապնդել և զարգացնել մինչ այդ Հայաստանի ներգրավվածությունը ԵՄ-ի կողմից իրականացվող ծրագրերում, այդ թվում՝ Եվրոպական հարևանության քաղաքականության և Արևելյան գործընկերության: ՀԸԳՀ-ն Հայաստանի համար մեծ ձեռքբերում է՝ խորը հարաբերությունների և մերձեցման համար՝ նպատակ ունենալով ամրապնդել համագործակցությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում[19]: Երկու կողմերի միջև հետաքրքրություն ներկայացնում են հետևյալ ոլորտները՝ արդարադատություն, անվտանգություն, տնտեսություն, գյուղատնտեսություն և ենթակառուցվածքներ, շրջակա միջավայր և կլիմա, սպառողների շահերի պաշտպանություն, միգրացիա, տեղեկատվական հասարակություն, սոցիալական քաղաքականություն, կրթություն և գիտություն, մշակույթ, առողջապահություն, տարածքային զարգացում և վիճակագրություն: Նշված ոլորտներում նախատեսվում է երկկողմ հարաբերությունների զարգացումը: Դրա բարեհաջող իրականացման համար առանձնացվում է 4 կարևոր կետեր՝ ավելի լավ կենսապայմաններ (նոր աշխատատեղերի ստեղծում, բիզնեսի նոր հեռանկարներ), ավելի արդար և ապահով հասարակություն (ժողովրդավարության և մարդու իրավունքների ամրապնդում, ավելի ապահով

---

[18]**Սաֆարյան Ա.,** ԵԱՏՄ-ին Հայաստանի մասնակցության չորս տարին, Եվրասիական ինտեգրման իրողություններն ու հեռանկարները, https://azg.am/AM/2018122121

[19]**Sargsyan A., Manukyan A., Mirzoyan A., Gzoyan E., Maisano D.,** EU-EAEU dilemma of Armenia: Does science support politics?, *Scientometrics*, 122 (2), 2020, p. 4.

և անվտանգ միջավայր, ավելի մեծ թափանցիկություն), ավելի մաքուր շրջական միջավայր (ավելի պաշտպանված միջավայր, ավելի մաքուր և մատչելի էներգիա), կրթության ոլորտում ընտրության ավելի մեծ հնարավորություն (ավելի լավ կրթություն, ավելի մեծ հնարավորություններ հետազոտությունների համար)[20]:

ՀՀ-ն հանձն է առել նաև համաձայնագրից բխող՝ փոխադարձության սկզբունքով պարտավորություններ և միայն դրանց կատարումը կարող է թույլ տալ Հայաստանին դառնալ ԵՄ լիարժեք գործընկեր և բարեկամ երկիր, որի իրականացման և զարգացման համար համաձայնագիրը մեծ հնարավորություններ է ընձեռում: Դրանք հետևյալն են.

- Ամրապնդել հիմնարար ազատությունների, մարդու իրավունքների, այդ թվում՝ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների, ժողովրդավարական սկզբունքների, իրավունքի գերակայության և արդյունավետ կառավարման նկատմամբ հարգանքը. ընդունելով, որ ժողովրդավարության և շուկայական տնտեսության ամրապնդմանն ուղղված ներքին բարեփոխումները՝ մի կողմից, և հակամարտությունների տևական կարգավորումը՝ մյուս կողմից, փոխկապակցված են: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում կայուն ժողովրդավարական բարեփոխման գործընթացը կնպաստի ամբողջ տարածաշրջանում վստահության և կայունության մթնոլորտ ստեղծելուն:
- Հանձն առնել էլ ավելի խթանել Հայաստանի Հանրապետության քաղաքական, սոցիալ-տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացումը, օրինակ՝ քաղաքացիական հասարակության զարգացման, պետական կառույցների կայացման, պետական կառավարման և քաղաքացիական ծառայության բարեփոխման, կոռուպցիայի դեմ պայքարի միջոցով, ինչպես նաև ընդլայնված առևտրային ու տնտեսական

[20]The comprehensive and enhanced partnership agreement between the Uuropean Union and Armenia CEPA, https://eeas.europa.eu/cepa-agreement-en_az, (14.09.21).

համագործակցության, այդ թվում՝ հարկային ոլորտում արդյունավետ կառավարման, աղքատության նվազեցման և ընդհանուր հետաքրքրություններ կայացնող ոլորտների լայն շրջանակում, այդ թվում՝ արդարադատության, ազատության և անվտանգության ոլորտում լայնածավալ համագործակցության միջոցով:

- Հանձն առնելով լիարժեք իրականացնել Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության, Միավորված ազգերի կազմակերպության 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, 1950 թվականի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա) և Եվրոպայում անվտանգության և համագործակցության համաժողովի 1975 թվականի Հելսինկյան եզրափակիչ ակտի (ԵԱՀԿ Հելսինկյան եզրափակիչ ակտ) նպատակները, սկզբունքները և դրույթները. միջազգային խաղաղությունը և անվտանգությունը խթանելու, ինչպես նաև համաձայնեցված ձևաչափերով արդյունավետ բազմակողմանիության և վեճերի խաղաղ կարգավորման մեջ ներգրավվելու իրենց կամքը, մասնավորապես՝ այդ նպատակով համագործակցելով Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) և Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) շրջանակներում:
- Հավատարիմ լինելով զանգվածային ոչնչացման զենքերի (ՋՈՋ) տարածման և դրանց մատակարարման միջոցների դեմ պայքարի համար և զինաթափման ու չտարածման, ինչպես նաև միջուկային ապահովության և անվտանգության հարցերով համագործակցության համար միջազգային պարտավորություններին:
- Հանձն առնելով կանխարգելել կոռուպցիան և պայքարել դրա դեմ, պայքարել կազմակերպված հանցավորության դեմ

և ամրապնդել ահաբեկչության դեմ պայքարին ուղղված համագործակցությունը։

- Հանձն առնել համապարփակ մոտեցմամբ ամրապնդել միգրացիայի, ապաստանի տրամադրման և սահմանների կառավարման վերաբերյալ իրենց երկխոսությունը և համագործակցությունը՝ ուշադրություն դարձնելով օրինական միգրացիային և անօրինական միգրացիայիում մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված համագործակցությանը։
- Հանձն առնելով ապահովել շրջակա միջավայրի պաշտպանությունը՝ ներառյալ անդրսահմանային համագործակցությունը և բազմակողմ միջազգային պայմանագրերի իրագործումը։
- Հանձն առնելով բարձրացնել էներգիայի մատակարարման անվտանգության և ապահովության մակարդակը՝ դյուրացնելով համապատասխան ենթակառուցվածքի զարգացումը, մեծացնելով շուկայի ինտեգրումը և նորմատիվային հիմքերի աստիճանական մոտարկումն այսուհետ հիշատակվող ԵՄ օրենսդրության առանցքային տարրերի հետ, խթանելով էներգաարդյունավետությունը և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության՝ էներգիայի մատակարարողի, տարանցման և սպառող երկրների նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքներին հավատարիմ լինելու հանձնառությունները։
- Հանձն առնել ապահովել այսուհետ հիշատակվող միջուկային ապահովության և միջուկային անվտանգության բարձր մակարդակներ։
- Հանձն առնելով ընդլայնել տարբեր երկրների մարդկանց միջև շփումները, այդ թվում՝ գիտության և տեխնոլոգիայի, կրթության և մշակույթի, երիտասարդության և սպորտի բնագավառներում համագործակցության ու փորձի փոխանակման միջոցով։

- Հանձն առնելով խթանել միջսահմանային և միջտարածաշրջանային համագործակցությունը:

Ընդունելով Հայաստանի Հանրապետության հանձնառությունը՝ իր օրենսդրությունն աստիճանաբար Եվրոպական Միության օրենսդրության համապատասխան մասերին մոտարկելու, որպես լայնածավալ բարեփոխումներին ուղղված իր ջանքերի մաս՝ այն արդյունավետորեն իրականացնելու, և իր վարչական ու ինստիտուցիոնալ կարողությունները սույն համաձայնագրի կատարման համար անհրաժեշտ ծավալով զարգացնելու մասով, և ընդունելով համագործակցության բոլոր առկա փաստաթղթերի համաձայն Եվրոպական միության կայուն աջակցությունը, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության բարեփոխումների արագությունն ու տնտեսական կարիքներն արտացոլող այդ հանձնառության հետ կապված տեխնիկական, ֆինանսական և տնտեսական աջակցությունը*[21]:

2021թ. փետրվարի 10-ին Եվրոպական միությունը ծանուցել է Հայաստանի Հանրապետությանը՝ ԵՄ և ԵՄ անդամ երկրների կողմից ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի վավերացման գործընթացի ավարտի մասին: Համաձայնագիրը լիարժեքորեն ուժի մեջ է մտել սույն թվականի մարտի 1-ից[22]: Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև երկկողմ հարաբերությունների շրջանակն ընդլայնելու կարևոր քայլ է, որն էլ հնարավորություն

---

*Աշխատանքում ներկայացվել է ՀՀ ստանձնած պարտավորությունների մի մասը:

[21]COMPREHENSIVE AND ENHANCED PARTNERSHIP AGREEMENT between the European Union and the European Atomic Energy Communityandtheir Member States, of the one part, and the Republic of Armenia, of the other part, https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:52017JC0037&from=EN, (14.09.21).

[22]ՀՀ ԱԳՆ հայտարարությունը ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի ուժի մեջ մտնելու վերաբերյալ, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2021/02/10/cepa/10786, (15.09.21).

կընձեռի ԵՄ-ին և Հայաստանին իրենց հարաբերությունները որակական նոր, ավելի բարձր մակարդակի հասցնելու համար: Երկկողմ համագործակցությունը բխում է երկու կողմերի շահերից, քանի որ Հայաստանը շահագրգռված է շարունակելու իր արտաքին քաղաքականությունը, որը նպատակ ունի լավ հարաբերություններ ունենալ բոլոր ուժային կենտրոնների հետ, իսկ ԵՄ-ն նշաններ է ցույց տալիս քաղաքական ասպարեզում համագործակցությունը շարունակելու ցանկության մասին: ԵՄ-ն բարեփոխումների ջատագով է և Հայաստանին ԵԱՏՄ-ին անդամակցությունից հետո ոչ միայն չկրճատեց աջակցությունը այդ բարեփոխումների իրականացման համար, այլ հակառակը, Հայաստանի տրամադրել է ավելի մեծ աջակցության փաթեթ 2014-2017թթ. համար[23]:

Այս ամենը ցույց է տալիս Հայաստանի համադրման քաղաքականության հաջողությունը՝ այնպիսի քաղաքականության իրականացումը, որ անդամակցությունը Եվրասիական տնտեսա-կան միությանը խոչընդոտ չհանդիսանա Եվրոպական միության նախաձեռնած ծրագրերի անդամ լինելուն ու երկկողմ հարաբերությունների շարունակական զարգացմանը:

Թեև ԵՄ-ն հաշվի է առնում Հայաստանի պարտավորությունները ԵԱՏՄ կազմում, միևնույն ժամանակ առաջ են գալիս հակասություններ, որովհետև Հայաստանը, կարողանում է համադրել միայն երկու ուղիները[24]: Իսկ, տվյալ պարագայում, ավելի կարևոր է ոչ թե հասնել համադրման, այլ հավասարակշռման: Հավասարակշռումն էլ կբխի Հայաստանի շահերից, որի պարագայում Հայաստանը կկարողանա առաջ տանել իր սեփական շահերը: Հատկանշական է, որ բանակցությունների ժամանակ ՀԸԳՀ-ի հիմքում ընկած արժեքների կայունությունը ապահովելու նպատակով ԵՄ-ն մերժեց հայկական կողմի առաջարկած

[23]**Torosyan H.,** The EU–Armenia Cooperation Prospects, *Kiel Security Policy Analysis*, № 42, 2015, p. 10.
[24]**Terzyan A.,** The EU vs. Russia in the foreign policy discourse of Armenia: The fragility of normative power or the power of Russian coercion?, *Eastern Journal of European Studies,* 8 (2), 2017, p. 201.

«բացառության դրույթը», ինչը թույլ կտար Հայաստանին հրաժարվել ՀԸԳՀ-ով ամրագրված պարտավորությունների կատարումից այն ոլորտներում, որոնցում Եվրասիական տնտեսական միությունը կարող է ընդունել նոր դրույթներ[25]: Սա նշանակում է, որ ՀԸԳՀ-ի շուրջ բանակցողները հիմնվել են ձախողված ԵՄ-Հայաստան Ասոցացման համա-ձայնագրի նախագծի տեքստի վրա՝ այն համապատասխանեցնելով ԵՄ-Հայաստան հարաբերությունների նոր ձևաչափին[26]: Մյուս կողմից էլ պարտավորությունները ԵԱՏՄ-ի կազմում շատ քիչ տեղ է թողնում Հայաստանին ավելի խորը համագործակցելու ԵՄ-ի հետ, մասնավորապես, տնտեսական ոլորտում[27], քանի որ ԵԱՏՄ-ին անդամակցելով՝ ՀՀ-ն մեծ հաշվով զրկվել է ինքնուրույն արտաքին առևտրատնտեսական քաղաքականություն իրականացնելու հնարավորությունից՝ պատվիրակելով այդ իրավունքը ԵԱՏՄ խորհրդին[28]: Այս ամենը հանգեցնում է նրան, որ երկու ուղիների ընձեռած հնարավորությունների կողքին առկա են երկու կողմերից ծագած խոչընդոտներ, որի հետևանքով Հայաստանը լիարժեքորեն չի կարողանում օգտվել միությունների առաջարկած հնարավորություններից, ինչն էլ նվազեցնում է ինտեգրման արդյունավետությունը:

Եվրոպական միությո՞ւն, թե՞ Եվրասիական տնտեսական միություն

Հայաստանը ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագիր կնքելու համար իրականացնում էր պահանջվող բարեփոխումները՝ մտադրություն ունենալով իրականացնել «և-և» աշխատանքային

[25]**Kostanyan H., Giragosian R.,** EU-Armenian Relations: Charting a Fresh Course. *CEPS Research Report,* № 15, 2017, p. 7.

[26]**Hayrapetyan G., Hayrapetyan V.,** The Foreign Trade of Armenia with Main Partners, *Research Result,* № 4, 2016, p. 6.

[27]**Terzyan A.,** Bringing Armenia Closer to Europe? Challenges to the EU-Armenia Comprehensive and Enhanced Partnership Agreement Implementation, *Romanian Journal of European Affairs*, 19 (2), 2019, p. 107.

[28]**Մելիքյան Ռ.,** ՀՀ արտաքին մարտահրավերները ԵԱՏՄ ինտեգրման շրջանակներում, *Եվրոպական ակադեմիա*, № 8, 2017, էջ 442:

բանաձևը, մինչդեռ մի քանի եվրոպական (հիմնականում շվեդ և լեհ) քաղաքական գործիչներ և հետազոտողներ պնդում էին մեկ այլ բանաձև՝ «կամ-կամ», հուսալով, որ Հայաստանը որոշում կկայացնի ի օգուտ ԵՄ-ի[29]: Գրեթե չորս տարի տևած բանակցությունները ավարտվեցին Հայաստանի Ասոցացման համաձայնագրից հրաժարումով, որից հետո Եվրոպական Խորհրդարանի արտաքին հարաբերությունների կոմիտեի նախագահ Է. Բրոքը հայտարարեց, որ Մաքսային միությանը անդամակցելու մասին որոշումը Հայաստանի նախագահը կայացրել է Ռուսաստանի ճնշման ներքո[30]:

Հայաստանը անդամակցեց Մաքսային միությանը և այդ ընտրությունը պատահական չէր: Այն պայմանավորված էր հետևյալ պատճառներով. նախ Ռուսաստանը Հայաստանի տնտեսական գլխավոր գործընկերն է, երկրորդ՝ Հայաստանը մեծապես կախված է Ռուսաստանից եկող էներգակիրների մատակարարումներից, երրորդ՝ հայկական սփյուռքը, և չորրորդ, բայց գլխավոր պատճառը՝ անվտանգության ավանդական մարտահրավերները[31]: Այս ազդեցության լծակները ՌԴ-ն հմտորեն օգտագործում է Հայաստանին իր ազդեցության ոլորտում պահելու համար, քանի որ Հայաստանը մշտապես եղել է ՌԴ հետաքրքրությունների շրջանակներում և, մյուս կողմից, Հայաստանը դիտվում է հարավկովկասյան կարևոր դաշնակից: Առանց ՀՀ-ի, Ռուսաստանի համար գրեթե անհնարին կլինի պահպանել իր ներկայությունը և ազդեցությունը տվյալ տարածաշրջանում: Սակայն ՀՀ-ի դերի և նշանակության կարևորությունը պետք է հասկանա առաջին հերթին հայկական կողմը և փորձի այն վերածել մանևրելու լծակի, քանի որ

[29]**Ter-Matevosyan V., Drnoian A., Mkrtchyan N., Yepremyan T.,** Armenia in the Eurasian Economic Union: reasons for joining and its consequences, *Eurasian Geography and Economics*, 58 (2), 2017, p. 342.

[30]Chairman European Parliament's Foreign Affairs Committee Elmar Brok said that Armenian President made the decision to join the CIS Customs Union under Russian pressure, https://mediamax.am/en/news/foreignpolicy/7923, (15.09.21)

[31]**Terzyan A.,** Armenia's foreign policy between European identity and Eurasian integration, *Eastern ChessBoard. Geopolitical Determinants and Challenges in Eastern Europe and the South Caucasus*, № 88, 2015, p. 256.

Հայաստանը և Արցախը միանշանակ կարևոր են ռուսական կողմի համար ոչ միայն տնտեսական, այլև ակնհայտորեն ռազմավարական տեսանկյունից[32]: Միևնույն ժամանակ, ՌԴ ազդեցության լծակները լուրջ մարտահրավեր են Հայաստանի համար:

2015թ. Հայաստանը լիարժեքորեն անդամակցեց եվրասիական ինտեգրման միջավայրին՝ հանձինս ԵԱՏՄ-ի: Ռուսաստանի կողմից վճռական քայլ էր՝ ստեղծել միություն, որը պետք է դառնար այլընտրանք ԵՄ-ին, այն ինչ ԵԱՏՄ-ն և ԵՄ-ն սկզբունքորեն տարբեր են և անհամեմատելի:

Չնայած Հայաստանի ընտրությանը և նրան, որ Եվրամիությունը առաջարկում էր ընտրություն կատարել «կամ-կամ» մոտեցմամբ, այնուամենայնիվ Հայաստան-ԵՄ հարաբերությունները չխզվեցին: Դրա փոխարեն, ԵՄ արտաքին հարաբերությունների ծառայության խոսնակ Մ. Կոչիյանչիչը նշել է. «Եվրամիությունը շարունա-կաբար հայտարարել է, որ երկիրը կարող է ԵԱՏՄ անդամ լինել և առանձին համաձայնագրեր ունենալ ԵՄ-ի հետ: Քանի որ անդամակցությունը ԵԱՏՄ-ին ենթադրում է առևտրային քաղաքականության ինքնիշխանության զիջում ԵԱՏՄ-ին, միակ անհնարինությունը վերաբերում է ԵՄ-ի հետ այնպիսի փաստաթուղթ ունենալուն, որը կներառեր հատուկ պայմաններ առևտրի համար»[33]: Այսինքն, Հայաստանի «ձեռքերը» կապվում են այլ կողմի հետ առևտրային գործարքներ կնքելու պարագայում: Թեև շուտով պարզվեց, որ նման սահմանափակումներ չունեցող Ուկրաինայի և Մոլդովայի դեպքում, որոնք ստորագրել էին Ասոցացման համաձայնագիրը, իրավիճակն ավելի բարվոք չէ, քանի որ իրենց արտադրանքը Եվրոպայում չի սպասվում և մերժումը հաճախ ուղեկցվում էր այն ձևակերպմամբ, որ նրանց արտա-

[32]**Օրդուխանյան Է.,** Եվրասիական տնտեսական միությունը և պանթյուրքիզմի ակտիվացման վտանգը, https://artsakhlib.am/wp-content/uploads/2019/11/52985775.pdf.

[33]Maja Kocijancic, Mogherini's spokesperson calls new EU-Armenia agreement "ambitious", https://mediamax.am/en/news/foreignpolicy/22702, (16.09.21).

դրանքը չի համապատասխանում ԵՄ չափանիշներին[34]: Սա ցույց է տալիս, որ Ասոցացման համաձայնագիր ստորագրած երկրները բախվել են խնդիրների և ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման ընթացքը տվյալ համաձայնագրի շրջանակներում հարթ չի ընթացել: Մյուս կողմից էլ ԵԱՏՄ-ն լիարժեք տնտեսական միություն չէ, այստեղ ավելի շատ կարևորվում են քաղաքական խորհրդանիշները, քան իր որդեգրած դրույթներն ու կանոնները[35]: ՌԴ-ի համար ԵԱՏՄ-ն քաղաքական գործիք է իր իշխանությունը պահպանելու համար, այլ ոչ թե անդամ պետությունների հետ տնտեսական խորը ինտեգրման միջոց[36]: Այսինքն ԵԱՏՄ-ն հանդիսանում է որպես «փափուկ» ուժ, որի միջոցով Ռուսաստանը, չվերահսկելով ու չմիջամտելով անդամ երկրների ներքին քաղաքականությանը, այդուհանդերձ կարողանում է ապահովել արտաքին քաղաքականության համահունչ լինելը իր շահերին:

Չնայած սրան, այսօր էլ, եթե Հայաստանը կանգնի ընտրության առաջ՝ Եվրոպական միությու՞ն, թե՞ Եվրասիական տնտեսական միություն, էլի ընտրելու է երկրորդ ուղին, քանի որ Ռուսաստանի ազդեցության լծակները մինչև այսօր էլ առկա են և, բացի այդ, Ռուսաստանի դիրքերը գնալով էլ ավելի են ամրապնդվում Հայաստանում և ամբողջ տարածաշրջանում՝ Արցախում ռուս խաղաղապահների տեղակայմամբ, ինչպես նաև ՀՀ տարածքում: Սա էլ վկայում է, հավասարակշռման անհրաժեշտության մասին, որին Հայաստանը չի կարողացել հասնել: Եվ ինչպես Ա. Իսկանդարյանն է նշում. «Այնպիսի իրավիճակներում, երբ Հայաստանից պահանջվի ընտրություն կատարել անվտանգու-

[34]**Баласанян Г**., Армения и евразийская интеграция: уроки, проблемы и перспективы, *Евразийская интеграция: проблемы и перспективы,* 2017, с. 8.

[35]**Wolczuk K., Dragneva R.,** The Eurasian Economic Union, deals, rules and the exercise of power, https://www.chathamhouse.org/2017/05/eurasian-economic-union/4-eaeu-intentions-and-limitations

[36]**Wolczuk K.,** The Eurasian Economic Union is a genuine and meaningful counterpart to the EU, Chatham House, *Myths and Misconceptions in the debate on Russia,* 2021, p. 65.

թյան և այլ ցանկացած բանի միջև՝ ընտրելու է անվտանգությունը»[37]: Իսկ նման դեպքերում Ռուսաստանի Դաշնությունը դիտարկվում է որպես Հայաստանի անվտանգության ապահովման կարևոր բաղադրիչ: Ավանդաբար Հայաստանի արտաքին քաղաքական խոսույթում Ռուսաստանը դիտվում է որպես անվտանգության ոլորտի անփոխարինելի դաշնակից և նույնիսկ տարածաշրջանում անվտանգություն ապահովող առանցքային դերակատար[38]:

Հատկանշանական է նաև, որ ի տարբերություն ԵԱՏՄ մյուս պետությունների Հայաստանը ունի ԵՄ-ի հետ հարաբերությունների զարգացման նպատակներ: ԵԱՏՄ ոչ մի այլ անդամ պետություն չունի ԵՄ-ին ինտեգրվելու ձգտումներ, Հայաստանը տարբերվում է նաև Վրաստանից, Մոլդովայից և նույնիսկ Ուկրաինայից, որոնք արդեն գնում են այդ ճանապարհով: Մյուս կողմից էլ Ռուսաստանից չափազանց մեծ կախվածությունը և ազդեցության լծակների ավելացումը Հայաստանը բախվում է միավեկտոր արտաքին քաղաքականություն վարելու անհրաժեշտությանը: Միավեկտորությունն էլ (ենթադաշնակցում) սահմանափակելու է Հայաստանի արտաքին քաղաքական մանևրի հնարավորությունները, նրան դարձելով խիստ կախված մեծ տերությունների փոխհարաբերություններից. որքան ցածր լինի դրանցում լարվածությունը, այնքան բարձր կլինի մանևրի և ներգրավումից օգուտ քաղելու հնարավորությունը, իսկ որքան բարձր լինի լարվածությունը, այնքան Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ առավել ընդգծված կլինի ենթադաշնակցումը[39]:

Այսօր միջազգային հարաբերությունների համակարգի փոփոխությունը ուղեկցվում է նոր մարտահրավերների և վտանգների առաջացմամբ, որոնց դեմ պետությունների մեծագույն մասն

---

[37]**Iskandaryan A.,** Armenia's Foreign Policy: Where Values Meet Constraints, *Armenia's foreign and domestic politics: Development trends*, 2013, p. 15.

[38]**Terzyan A.,** Material Forces vs. the Force of Ideas: What makes Russia Armenia's 'best friend' ?, *Armenian Journal of Political Science,* 1 (8), 2018, p. 17.

[39]**Գալստյան Ն.,** Հայաստանի բազմավեկտոր արտաքին քաղաքականության հայեցակարգը և պրակտիկան, *Կառավարման ժամանակակից հիմնախնդիրներ*, № 2, 2019, էջ 231:

ունակ չէ միայնակ պայքարելու: Հայաստանի Հանրապետությունն էլ, լինելով փոքր պետություն և ունենալով ավանդական մարտահրավերներ, կարևորում է համագործակցությունը, կապերի ապահովումը երկկողմ ու բազմակողմ ձևաչափերում: Այդ պատճառով Հայաստանն արտաքին քաղաքականությունը պետք է այնպես կառուցի, որ կարողանա պահել համադրման հավասարակշռությունը:

Վերջին տարիներին Հայաստանի արտաքին քաղաքականությունում զգալի փոփոխություններ են տեղի ունեցել՝ կապված 2018թ. «թավշյա» հեղափոխության հետ: Նախ հեղափոխության առաջնորդ Նիկոլ Փաշինյանը Կրեմլին հայտնի էր որպես ընդդիմադիր պատգամավոր, ով կոչ էր անում դուրս գալ ԵԱՏՄ-ից, որպես հիմնավորում նշում էր այն, որ ԵԱՏՄ-ին անդամակցելուց հետո Հայաստանի Հանրապետությունը տնտեսական, սոցիալական և ռազմաքաղաքական հետընթաց է գրանցել[40]: Եվ դա էր պատճառը, որ հեղափոխության հենց սկզբից պաշտոնական Մոսկվան որդեգրել էր սպասողական դիրքորոշում՝ սպասելով հետագա զարգացումներին: Իսկ այդ ընթացքում Ն. Փաշինյանը սկսել էր հարաբերությունները խորացնել Եվրամիության հետ՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի իրականացման միջոցով և համագործակցել ՆԱՏՕ-ի հետ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում[41]: Այս ամենը, ինչպես նաև Ն. Փաշինյանի վարած կադրային քաղաքականությունը, որը Կրեմլում համարեցին շրջադարձ դեպի Արևմուտք, անհանգստացնում էր Ռուսաստանին[42]:

Պաշտոնական Մոսկվան լռություն էր պահպանում, բայց երկկողմ լարվածությունը մեծացավ ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի

[40]**Giragosian R.,** Paradox of power: Russia, Armenia, and Europe after the Velvet Revolution, *European Council on Foreign Relations,* 2 (95), 2019, p. 12.

[41] **Lanskoy M., Suthers E.,** Armenia's Velvet Revolution, *Journal of Democracy*, 2 (30), 2019, p. 97.

[42]**Վարդազարյան Մ., Վարդազարյան Ե.,** Հայոց «թավշյա հեղափոխությունը» և ՀՀ-ՌԴ հարաբերությունների զարգացման դինամիկան, *Բանբեր*, 1 (28), 2019, էջ 6:

ձերբակալությունից հետո: Ռուսաստանը կոշտ արձագանքեց պաշտոնական Երևանի գործողություններին: Հուլիսի 31-ին ՌԴ արտգործնախարար Ս. Լավրովը հայտարարեց. «Հայաստանում տեղի ունեցող գործընթացները չեն կարող չանհանգստացնել Մոսկվային, ինչի կապակցությամբ վերջին օրերին մեր մտահոգությունն ենք մի քանի անգամ հայտնել հայկական ղեկավարությանը»[43]: Սա ինքնին ցույց է տալիս, որ ներքին քաղաքականությունում արվում են փոփոխություններ՝ առանց հաշվի առնելու դրանց հետևանքները արտաքին քաղաքակա-նությունում: Պետք է նշել նաև, որ Ն. Փաշինյանը վարչապետի պաշտոնը զբաղեցնելուց հետո անհիմն համարեց ԵԱՏՄ կազմից դուրս գալը և հաստատեց հայ-ռուսական գործընկերության անհրաժեշտությունը[44]: Նաև նոր իշխանությունները փորձեցին փարատել Մոսկվայի՝ Հայաստանի հանդեպ ունեցած տարակու-սանքներն ու անվստահությունը: Նախ, ակնհայտ էր, որ հակառու-սականը հռետորաբանությունը կարող է վախեցնել բնակչության մի մասին՝ թույլ չտալով նրանց աջակցել շարժմանը: Երկրորդ՝ հայտարարելով հայ-ռուսական ռազմավարական հարաբերություն-ների պահպանման կարևորությունը՝ նա կարողացավ կանխել, որ Մոսկվան ներգրավվի բողոքի ցույցերին՝ ի պաշտպանություն իր շահերի[45]: Կարճ ժամանակահատվածում Ն. Փաշինյանը հանդիպումներ և բազմաթիվ հեռախոսազրույցներ ունեցավ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Ինչպես նաև հավաստիացրեց, որ ՀՀ-ն շարունակելու է մնալ ՀԱՊԿ-ի և ԵԱՏՄ-ի լիարժեք անդամ՝ ՀՀ-ն ընդգրկված է ՀԱՊԿ անվտանգության համակարգում, իսկ Եվրասիական տնտեսական միությունը լայն հնարավորություններ

[43]**Сергей Лавров,** Ответ Лаврову? 17 августа Никол Пашинян проведет митинг, https://regnum.ru/news/polit/2457222.html, (16.09.21)

[44]**Terzyan A.,** The anatomy of Russia's grip on Armenia: Bound topersist ?, *CES Working Papers*, 10 (2), 2018, p. 234.

[45]**Davtyan V., Markarov A.,** Post-Velvet Revolution Armenia's Foreign Policy Challenges, *Demokratizatsiya: The Journal of Post-Soviet Democratization,* 26 (4), 2018, p. 532.

է ընձեռում երկրի տնտեսական զարգացման համար[46]: Միևնույն ժամանակ, նոր իշխանությունները սկսեցին վերականգնել Ռուսաստանի հետ հարաբերությունները և դա անհրաժեշտ է, քանի որ ոչ մի այլ համագործակցող կողմ Հայաստանին չի առաջարկել կենսունակ այլընտրանք իր անվտանգության մարտահրավերների և տարածաշրջանային խնդիրների լուծման համար: Որի արդյունքում Ռուսաստանը վստահ է, որ ինչ էլ լինի, Հայաստանը ապավինելու է իրեն և միշտ սերտորեն կապված է լինելու իր հետ[47]:

Դա էր պատճառը, որ ՀՀ նոր կառավարության արտաքին քաղաքական գերակայությունները հիմնականում համահունչ մնացին նախորդ կառավարությունների վարած արտաքին քաղաքականությանը, այդ թվում՝ Ռուսաստանի և ԵՄ-ի հետ համագործակցության հարցում: Շատ կարևոր է, որ Հայաստանը վարի այնպիսի արտաքին քաղաքականություն, որպեսզի համագործակցությունը երկու կողմերի հետ չդիտվի որպես փոխադարձ բացառող, այլ՝ փոխադարձ համադրվող և հավասարակշռող: Բացի այդ Հայաստանի արտաքին քաղաքականությունը մեծապես որոշվում է տարածաշրջանային աշխարհաքաղաքական միջավայրի և անվտանգության առջև ծառացած մշտական սպառնալիքներով[48]: Այս հանգամանքն էլ, բացի առանձին ոլորտներում առկա խոչընդոտներից, որոնք ներկայացվել են վերը, առաջ է բերում նաև այլ խոչընդոտներ՝ կապված արժեքների և շահերի երկընտրանքի հետ: Օրինակ ԱՊՀ և հետխորհրդային տարածքի ինտեգրման միավորների առանցք հանդիսացող Ռուսաստանի համար ՀԱՊԿ-ն ծառայում է որպես աշխարհաքաղաքական շահերի կազմակերպություն, որտեղ հետին պլան են մղվում փոքր պետությունների

[46]**Terzyan A.,** The Aftermath of the “Velvet Revolution”: Armenia Between Domestic Change and Foreign Policy Continuity, *Eastern European Journal for Regional Studies,* 5 (2), 2019, p. 27.

[47]**Cherrington C.,** A Necessary Turn to Russia: Armenian-Russian Relations, *Armenian Journal of Political Science*, 1 (8), 2018, p. 30.

[48]**Markarov A.,** Armenia’s Foreign Policy Priorities. Are There Any Major Changes Following the Spring 2018 Political Transformation ?, *Caucasus Analytical Digest,* № 104, 2018, p. 6.

շահերը: Ըստ ՀԱՊԿ կանոնադրության, ՀՀ-ն կարող է իր դեմ ռազմական գործողությունների իրականացման դեպքում, ստանալ և օգտագործել մյուս անդամ պետությունների աջակցությունը: Սակայն մինչ այդ, ինչպես ցույց են տալիս փաստերը, նրանք նախ և առաջ հաշվի են առնում իրենց շահերը, արդյո՞ք դա կվնասի իրենց կամ դրանից ի՞նչ օգուտներ կունենան, նաև օգնությունը Հայաստանին, ի՞նչ արձագանք կունենա Ադրբեջանի կողմից: Բացի այդ, անդամ պետությունները նաև այլ կազմակերպությունների անդամ են և նրանք հաշվի են առնում նաև իրենց պարտավորությունները այդ կազմակերպությունների հանդեպ: Օրինակ, ՀԱՊԿ ձևաչափի անդամ երկրները Ռուսաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Տաջիկստանը նաև Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) անդամներ են, որտեղ Ռուսաստանը ակնհայտ ու միանձնյա առաջնորդություն չունի[49]: Կամ Ղազախստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը Իսլամական համագործակցության կազմակերպության անդամ երկրներ են, իսկ այդ կազմակերպությունը ԼՂ հարցում ունի ընդգծված ադրբեջանամետ դիրքորոշում: Բացի այդ, Ղազախստանն ու Ղրղզստանը, Ադրբեջանի և Թուրքիայի հետ նաև Թյուրքալեզու պետությունների միության անդամ են, իսկ այս երկրների իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ ԼՂ խնդիրը պետք է կարգավորվի Ադրբեջանի ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և միջազգայնորեն ճանաչված սահմանների անձեռնմխելիության սկզբունքների համաձայն[50]:

Նույն կերպ էլ վարվում է Եվրոպական միությունը, որն առավել քան երբևէ սկսել է մեծ ուշադրություն դարձնել սեփական էներգետիկ անվտանգության ապահովմանը՝ էներգամատակարարման ուղիների բազմազանեցմանը, քանի որ Ռուսաստանը,

---

[49]**Սարգսյան Ս.,** ՀԱՊԿ և ՇՀԿ քաղաքականությունը Հարավային Կովկասի տարածաշրջանում, *Գլոբուս*, 4 (25), 2012, էջ 49:

[50]**Bayaliyev A.,** The Turkic Council: Will the Turks Finally Unite?, https://www.cacianalyst.org/publications/analytical-articles/item/12916-the-turkic-council-will-the-turks-finally-unite?.html, (16.09.21).

լինելով ԵՄ ամենախոշոր էներգամատակարարը, Եվրոպային որոշակի կախվածության մեջ է դնում, և այդ կախվածությունը վերացնելու միջոց պետք է դառնա Հարավային գազային միջանցքը՝ որպես այլընտրանք ռուսական գազին և, ինչպես ամրագրված է ԵՄ էներգետիկ անվտանգության ռազմավարության մեջ, էներգետիկ անկախության ապահովումը ԵՄ-ի համար առաջնահերթություն է, ինչն էլ հետին պլան է մղում արժեքները՝ հիմնվելով էներգետիկ շահի վրա: Այս բոլորը հաշվի առնելով Հայաստանը պետք է այնպես կառուցի իր արտաքին քաղաքականությունը, որ այն ճակատագրական չլինի իր համար և 2020թ. պատերազմը դրա վառ ապացույցն է:

Հետևաբար, ստիպված լինելով կատարել բարդ աշխարհաքաղաքական ընտրություն՝ Հայաստանը որպես հետխորհրդային երկիր, կարող է դիտարկվել տարբեր մակարդակներ ու վեկտորներ ունեցող հետխորհրդային տրանսֆորմացիայի, միջազգայնացման, եվրոպականացման և ինտեգրման փոխկապակցված գործընթացների ուսումնասիրության առանձնահատուկ լաբորատորիա[51]: Սա վկայում է Հայաստանի կարողությունների և հնարավորությունների մասին՝ աշխատելու երկու մեծ ինտեգրման միությունների հետ՝ Եվրոպական միություն և Եվրասիական տնտեսական միություն, որի իրագործման համար պետք է այնպիսի քաղաքականության որդեգրում, որը չի հանգեցնի Եվրոպական միությու՞ն, թե՞ Եվրասիական տնտեսական միություն ընտրությանը, այլ հակառակը Հայաստանը կարող է հասնել երկու բևեռների հավասարակշռմանը՝ եվրոպական և եվրասիական ինտեգրումները դարձնելով զարգացման երկու հնարավորություն, այլ ոչ թե երկու խոչընդոտ: Այդ իսկ պատճառով պետք է օգտագործի բոլոր հնարավոր և անհնարին միջոցները, որպեսզի հաղթահարի առկա մարտահրավերները, որոնցից են՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի պատշաճ կերպով իրականացումը,

[51]**Khovorostyankina A.,** Constitutional Identity in the Context of Post-Soviet Transformation, Europeanization and Regional Integration Processes: the case of Armenia, *Armenian Journal of Political Science,* 1 (6), 2017, p. 47.

արցախյան 44-օրյա պատերազմից հետո երկկողմ հարաբերությունների՝ ՌԴ-Հայաստան և ԵՄ-Հայաստան, կայունացում և տարաձայնությունների բացակայություն, քանի որ տարաձայնությունները մեկ կողմի հետ ինքնին նպաստում են միաբևեռության հաստատմանը, ՌԴ ազդեցության լծակների բալանսավորում՝ գերակայությունից խուսափելու համար, որն էլ իր հերթին կապահովի ճկունություն մրցակցող բևեռների հետ հարաբերություններում: Հակառակ դեպքում, ինչպես ցույց տվեց 2020թ. պատերազմը, հղի է Հայաստանի համար չափազանց ծանր կորուստներով ու հետևանքներով:

Եզրակացություն

Ամփոփելով վերլուծության արդյունքները, կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների՝

- ԽՍՀՄ փլուզումից հետո համակարգային տրանսֆորմացիայի անհրաժեշտության մարտահրավերը հաղթահարող հետխորհրդային տրանսֆորմացիայի պետությունները արտաքին հարաբերությունների ոլորտում կարևորագույն խնդրի՝ միջազգային ինտեգրման միջավայրի ընտրության հարցում ունեին երկու հնարավորություն՝ անդամակցություն հետխորհրդային տարածքում ձևավորվող կազմակերպություններին կամ եվրոպական ինտեգրման կառույցներին:
- Հայաստանի Հանրապետությունը, ունենալով եվրասիական և եվրաինտեգրման ուղիներից որևէ մեկի ընտրության հնարավորություն՝ նախընտրեց երկու ուղղությունների համադրման քաղաքականություն՝ անդամակցելով հետխորհրդային տարածքում ձևավորվող միջազգային ինտեգրման կառույցներին և անդամակցելով Եվրոպայի խորհրդին ու արդյունավետ համագործակցային հարաբերություններ հաստատելով Եվրոպական միության հետ:

- Հետխորհրդային տարածքում եվրասիական և եվրաինտեգրման ուղիների համադրման բացառիկ քաղաքականությունը Հայաստանն իրականացրել է երեք փուլերով՝ ձևավորման, բուն կամ հիմնական և զարգացման, որոնք էլ պայմանավորել են համադրման քաղա-քականության հաջողությունը:
- Հայաստանը մշտապես գտնվել է և գտնվում է հետխորհրդային տարածքի և եվրոպական միջավայրի ինտեգրման գործընթացների արժեքների և շահերի բախման կիզակետում, որտեղ շահը դառնում է ընտրության առաջնային, իսկ արժեքը՝ հնարավոր գործոն:
- Համադրելով եվրասիական և եվրաինտեգրման ուղիները և բախվելով արժեքների և շահերի երկընտրանքին՝ Հայաստանը նույնպես առաջնորդվել է շահերով՝ նախընտրելով սեփական անվտանգությունը, սակայն ուղիների համադրմամբ փորձում է նաև հնարավորինս առաջ մղել արժեքներով պայմանավորված գործընթացները:
- Երկու ուղիների համադրման փորձը աչքի է ընկնում մի կողմից ԵԱՏՄ-ում անդամակցության զարգացմամբ, մյուս կողմից ԵՄ-ի հետ նոր՝ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կնքմամբ:
- Չնայած երկու ուղղությունների համադրման հաջողությանը, այն մի կողմից ընձեռում է լայն հնարավորություններ, մյուս կողմից էլ առաջ բերում խոչընդոտներ, քանի որ անդամակցությունը ԵԱՏՄ-ին քիչ տեղ է թողնում ԵՄ-ի հետ հարաբերությունների խորացմանը, մասնավորապես տնտեսական ոլորտում, և հակառակը. Հայաստանը ստանձնել է ՀԸԳՀ-ից բխող փոխադարձության սկզբունքով պարտավորություններ, որոնց կատարումից է կախված համաձայնագրի իրականացումը:
- Չնայած Հայաստանը փորձում է վարել բազմավեկտոր արտաքին քաղաքականություն՝ ձգտելով հավասարակշռել և խույս տալ որևէ պետության գերակայությունից,

այնուամենայնիվ, ստիպված է հաշվի առնել ինչպես բարդ միջավայրով պայմանավորված անվտանգության խնդիրների լուծման անհրաժեշտությունն, այնպես էլ այնպիսի պետության հետ հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները, ինչպիսին է Ռուսաստանը:

- 2018թ. իշխանափոխությունից հետո, երբ խախտվեցին արտաքին քաղաքական հավասարակշռության և երկու ուղիների համադրմամբ պայմանավորված առանձնահատկությունները, Հայաստանը ոչ միայն կորցրեց համադրման քաղաքականությամբ պայմանավորված առավելություններն, այլև ունեցավ աղետալի մարդկային, նյութական, բարոյական կորուստներ: Թեև առկա էր հետխորհրդային տարածքում անհավասարակշիռ արտաքին հարաբերությունների արդյունքում կորուստների վրացական և ուկրաինական փորձն ու դրանից խուսափելու հայկական փորձը, սակայն վերջին երեք տարիներին դրանք արհամարհվեցին և տեղի ունեցավ 2020թ. աղետը:
- Հայաստանի համար առաջնային պետք է դառնա այնպիսի քաղաքականության որդեգրումը, որը համադրումը չի վերածի երկու խոչընդոտի, այլ կդառնա զարգացման երկու հնարավորություն, մանավանդ, որ կարող է կապող օղակ հանդիսանալ երկու բևեռների միջև՝ ունենալով այդպիսի կարողություն:

Armenia's Policy of Combining the European and Eurasian Integration Paths: Two Opportunities or Two Obstacles for Development?

ANAHIT BABAYAN
Brusov State University

With regard to international integration, Armenia occupies a unique position among the post-Soviet states. Combining Eurasian and European integration paths has always been the primary goal of the foreign policy of the Republic of Armenia. To this end, Armenia joined the extant international integration unions in the post-Soviet space: the Commonwealth of Independent States, the Collective Security Treaty Organization, the Eurasian Economic Union, demonstrating an active and proactive participation. At the same time, it is a member state of the Council of Europe and actively cooperates with the EU, signing a special agreement to expand the partnership. Combining those two paths not only enables to use the opportunities provided by them, but also creates a set of limitations arising from both. Therefore, it is highly relevant to research the effectiveness of the combination of these two paths, that is, the combination as two opportunities for development, or the possibility of simultaneously acting in divergent directions as two obstacles for development.